ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Արգավանդ համայնք, Կենտրոնական 2-րդ փողոց թիվ 5
Հեռ. 091-43-73-38, e-mail: argavandhamaynk@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«22» հոկտեմբերի 2015 թվականի №34

ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 09 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ պարբերության պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել համայնքի ավագանու 2015 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ 09 նիստի օրակարգը:

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արգավանդ համայնքի համայնքային սեփականություն համարվող հողամասերը օրենքով սահմանված կարգով օտարելու թույլտվություն տալու մասին:
2. Համայնքի 2015 թվականի բյուջեի վարչական մասում փոփոխություն կատարելու մասին:

Ավագանու անդամներ կողմ (5) դեմ (0) ձեռնպահ(0)
Գրիգորյան Կարապետ
Կոստանյան Հովհաննես
Մարգարյան Տիգրան
Մուրադյան Արթուր
Սարգիսյան Մուշեղ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՕՐԴՈՒԽԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Արգավանդ համայնք, Կենտրոնական 2-րդ փողոց թիվ 5
Հեռ. 091-43-73-38, e-mail: argavandhamaynk@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«22» հոկտեմբերի 2015 թվականի №35-Ն

ՀԱԱՅՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով, «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 1018-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունիսի 25-ի թիվ 681-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 31-ի թիվ 997-Ն որոշումներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Թույլատրել Արգավանդ համայնքի ղեկավարին՝ «Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի» շրջանակներում բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչված համայնքի սեփականություն համարվող հողամասերը համապատասխան փոխհատուցման դիմաց օտարել Հայաստանի Հանրապետությունը՝ համաձայն հավելվածի
2. Հաստատել օտարվող հողամասերի փոխհատուցման ենթակա գումարները՝ համաձայն հավելվածի:
3. Սահմանել, որ Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման և օտարման դիմաց տրվող փոխհատուցման մասին պայմանագրում պետք է սահմանվեն իրականացվելիք գործարքի պայմանները, ինչպես նաև պայմանագրի պայմանների խախտման համար պատասխանատվությունը:

4. Հանձնարարել համայնքի ղեկավարին սույն որոշման պահանջներին համապատասխան Երևանի քաղաքապետի հետ (որի անունից2015 թվականի հուլիսի 17-ի թիվ 2186-Ա որոշման համաձայն հանդես է գալիս «Երևանի քաղաքապետարանի Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ/ծրագրի ղեկավարը) կնքել Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման և օտարման դիմաց տրվող փոխհատուցման մասին համապատասխան պայմանագիր:

Ավագանու անդամներ	կողմ (5)	դեմ (0)	ձեռնպահ(0)
Գրիգորյան Կարապետ			
Կոստանյան Հովհաննես			
Մարգարյան Տիգրան			
Մուրադյան Արթուր			
Սարգիսյան Մուշեղ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՕՐԴՈՒԽԱՆՅԱՆ

Հավելված 1
Արգավանդ համայնքի ավագանու
2015 թվականի հոկտեմբերի
22- ի № 35 որոշման

№	ԱԵԱ-Ի անուն,ազգանուն	Լոտ-կոդը	Սեփականատերը	Ազդեցության ենթակա տարածքը(մ^2)	Ընդհանուր փոխհատուցում
1	Արգավանդ համայնք	0255-0003	Համայնք	5282.99	42.285.052
2	Արգավանդ համայնք	0026-0002	Համայնք	13.01	184.146
3	Արգավանդ համայնք	0255-0006	Համայնք	25.15	355.979

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. ՈՍԿԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Արգավանդ համայնք, Կենտրոնական 2-րդ փողոց թիվ 5
Հեռ. 091-43-73-38, e-mail: argavandhamaynk@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«22» հոկտեմբերի 2015 թվականի №36-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Պահուստային ֆոնդից պակասեցնել 250.0 հազ. դրամ և նույն գումարի չափով ավելացնել 01-6/1-ի 4239 հոդվածին ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների նպատակով:

Ավագանու անդամներ կողմ (5) դեմ (0) ձեռնպահ(0)
Գրիգորյան Կարապետ
Կոստանյան Հովհաննես
Մարգարյան Տիգրան
Մուրադյան Արթուր
Սարգիսյան Մուշեղ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՕՐԴՈՒԽԱՆՅԱՆ